Հաստատված է՝
Հյուսիսային համալսարանի
ուսումնամեթոդական խորհրդի կողմից

«23» փետրվար 2009

Հյուսիսային համալսարանի ռեկտոր՝ Ը. Մակիչյան

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Հյուսիսային համալսարանի ուսանողական գիտական ընկերությունը /այսուհետև ընկերություն/ Հյուսիսային համալսարանի ուսանողներին միավորող ուսանողական ստորաբաժանում է, որի նպատակն է նպաստել ուսանողության գիտական, ստեղծագործական, հոգևոր զարգացմանը:

1.2 Ընկերությունը գործում է Հյուսիսային համալսարանի կանոնադրության և սույն կանոնադրության հիման վրա:

1.3 Ընկերության կանոնադրության և նրա մեջ կատարվող փոփոխությունները հաստատվում են Հյուսիսային համալսարանի ռեկտորի կողմից՝ ՈՒԳԸ խորհրդի ներկայացմամբ:

1.4 Ընկերությունը, սահմանված կարգով, կարող է ունենալ կլոր լնիք, անկյունային դրոշմ, պաշտոնաթուղթ:

1.5 Ընկերությունը իր նպատակների և խնդիրների լուծման, երկարաժամկետ ծրագրերի իրականացման համար համագործակցում է համալսարանի ուսանողական խորհրդի և այլ կազմակերպությունների հետ:

1.6 Ընկերության անվանումն է՝ Հյուսիսային համալսարանի Ուսանողական գիտական ընկերություն, կրճատ ՈԻԳԸ:

2. Ընկերության նպատակն ու խնդիրները

2.1 Ընկերության նպատակն է նպաստել ուսանողության գիտական, ստեղծագործական և հոգևոր զարգացմանը:

2.2 Ընկերության խնդիրներն ու հիմնական ուղղություններն են.

. գիտական և կրթական ոլորտում ուսանողության նախաձեռնությունների սատարում և իրականացում,
. ուսանողական գիտաժողովների, կոնֆերանսների, սեմինարների, գիտահանրամատչելի դասախոսությունների և այլ գիտական ու կրթական ուղղվածություն ունեցող միջոցառումների կազմակերպում՝ դրանցում ընգրկելով նաև արտահամալսարանական գիտական ներուժը,
. համալսարանական երիտասարդության գիտական ներուժի նպատակաուղղված օգտագործում և դրա մասին տեղեկատվության համակարգում,
. համակողմանի աջակցության ապահովում շնորհաշատ ուսանողներին,
. գիտական խմբերում և տարբեր գիտական ծրագրերում ուսանողների ընդգրկում,
. ուսանողների գիտական աշխատանքների և այլ նյութերի հրատարակում,
. այլ գիտական կենտրոնների հետ կապի հաստատում և տեղեկատվության փոխանակում:

3. Ընկերության կառուցվածքը և ղեկավար մարմինները

Ա. ՖԱԿՈՒԼՏԵՏԱՅԻՆ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Ընկերության կառուցվածքային սկզբնական օղակները ֆակուլտետային ուսանողական գիտական ընկերություններն են, որոնք ձևավորվում են ամբիոնների երաշխավորությամբ ներկայացված առնվազն երկու ուսանողներից: Ֆակուլտետի ՈՒԳԸ-ն մշակում և իրականացնում է ծրագրեր, որոնք ուղղված են ՈՒԳԸ-ի կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացմանը:

3.2 Ֆակուլտետի ՈՒԳԸ-ի առաջադրմամբ ֆակուլտետի ամբիոնի վարիչը հաստատում է ֆակուլտետի ՈՒԳԸ-ի նախագահի, քարտուղարի թեկնածությունները, որոնք կազմակերպում են նրա հանձնախմբերի աշխատանքները, ներկայացնում ֆակուլտետի ՈՒԳԸ-ն և նրա ծրագրերը համալսարանի ՈՒԳԸ խորհրդում:

3.3 Ֆակուլտետի ՈՒԳԸ-ի նիստերը հրավիրվում են առնվազն ամիսը մեկ անգամ: Նիստերը հրավիրվում են նախագահի կողմից, կամ անդամների 1/3 պահանջով: Նիստը օրինական է, եթե նրան մասնակցում են անդամների ավելի քան 1/2-ը, իսկ որոշումները ընդունվում են անդամների թվի պարզ մեծամասնությամբ: Հակուլտետի ՈՒԳԸ-ն կարող է մշակել իր կանոնակարգ և սահմանել սույն կանոնադրությանը չհակասող այլ կառուցվածքային միավորներ:

3.4 Ֆակուլտետի ՈՒԳԸ-ի նախագահը հանդիսանում է ֆակուլտետի խորհրդի անդամ, համալսարանի ՈՒԳԸ խորհրդի անդամ:

3.5 Ֆակուլտետի ՈՒԳԸ-ն կարող է կյանքի կոչել տարբեր և բազմաբնույթ ակումբներ, որոնց կազմում կարող են ընդգրկվել ֆակուլտետի այլ ուսանողներ ևս:

Բ. ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ

3.6 Համալսարանի ՈւԳԸ-ի ղեկավար մարմինը ՈւԳԸ խորհուրդն է, որի նիստը գումարվում է ուսումնական կիսամյակում ոչ պակաս քան 3 անգամ:

3.7 ՈւԳԸ-ի խորհրդի կազմի մեջ մտնում են ՈւԳԸ նախագահը, նախագահի տեղակալը, քարտուղարը, ֆակուլտետային ՈւԳԸ-ների նախագահները և ՈւԽ նախագահը:

3.8 ՈւԳԸ խորհուրդը՝

. քննարկում և որոշում է ՈւԳԸ-ի գործունեության կարևորագույն ուղղությունները, միջոցներ է ձեռնարկում որոշումների իրականացման համար,

. առաջարկություններ է ներկայացնում Համալսարանի Գիտական խորհրդին և ռեկտորատին,

. քննարկում և հաստատում է ՈւԳԸ նախագահի տարեկան հաշվետվությունը,

. մշակում է ընկերության ընթացիկ և հեռանկարային ծրագրերը, հաստատում է և կոորդինացնում ֆակուլտետային ՈւԳԸ-ների աշխատանքները և ծրագրերը,

. հաստատում է իր աշխատակարգը,

. ստեղծում, վերակազմավորում և լուծարում է սույն կանոնադրությամբ չսահմանված ՈւԳԸ աշխատանքային օղակները, ինչպես նաև հաստատում է նրանց կազմը և աշխատակարգը, ընդ որում նրանց կարող է լիազորել իր իրավասությանը վերաբերվող որոշ հարցերի լուծման իրավունք,

. որոշում է ընդունում ընկերության պատվավոր անդամի կոչում շնորհելու մասին և կանոնակարգում է ընկերության անդամությանը վերաբերվող այլ հարցեր,

. վավերացնում է ընկերության անունից կնքած պայմանագրերն ու համաձայնագրերը:

3.9 Համալսարանի ՈւԳԸ խորհրդի նիստը օրինական է, եթե նրան մասնակցում են անդամների ընդհանուր թվի ավելի քան կեսը: Որոշումները ընդունվում են նիստի մասնակիցների ընդհանուր թվի պարզ մեծամասնությամբ: ՈւԳԸ խորհրդի արտահերթ նիստ կարող է հրավիրվել ՈւԳԸ նախագահի, խորհրդի անդամների 1/3 պահանջով:

Գ. ՈՒԳԸ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

3.10 ՈւԳԸ նախագահը հաստատվում է ՈւԳԸ խորհրդի կողմից՝ ռեկտորի ներկայացմամբ:

3.11 Նախագահի տեղակալին և քարտուղարին, մեկ շաբաթվա ընթացքում ռեկտորի հաստատմանն է ներկայացնում ՈւԳԸ նախագահը:

3.12 ՈւԳԸ նախագահը ի պաշտոնե հանդիսանում է Համալսարանի գիտական խորհրդի անդամ:

3.13 Ընկերության նախագահը ի պաշտոնե ներկայացնում է ընկերությունը, համակարգում է ընկերության խորհրդի գործունեությունը, ապահովում է ընկերության կառուցվածքային միավորների համագործակցությունը, տալիս է լիազորագրեր, ընկերության անունից կնքում է պայմանագրեր և համաձայնագրեր:

3.14 ՈւԳԸ նախագահը տարեկան հաշվետվությամբ հանդես է գալիս Համալսարանի գիտական խորհրդում:

3.15 Ընկերության նախագահի տեղակալը նախագահի բացակայության դեպքում ստանձնում է նրա լիազորությունները:

3.16 Ընկերության քարտուղարը ղեկավարում է քարտուղարության աշխատանքները՝ առաջնորդվելով ՈւԳԸ խորհրդի աշխատակարգով:

4. Ընկերության միջոցները և դրանց օգտագործման կարգը

4.1 Ընկերության միջոցները գոյանում են Համալսարանի բյուջեից կատարվող մասհանումներից, հովանավորների կողմից կատարվող հատկացումներից:

4.2 Ընկերությունը անվճար, համաձայն սահմանված կարգի, օգտվում է համալսարանի տարածքային, գույքային, տեխնիկական այլ միջոցներից:

4.3 Ընկերության միջոցները օգտագործվում են կանոնադրական նպատակների և խնդիրների իրականացման համար:

5. Ընկերության գործունեության դադարեցման կարգը

5.1 Ընկերությունը իր գործունեությունը դադարեցնում է համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ կամ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.2 Ընկերության լուծարումից հետո նրա ամբողջ գույքը պատկանում է Հյուսիսային համալսարանին: